Հայաստան-Եվրոպական Միություն գագաթնաժողովի արդյունքներով համատեղ հայտարարություն

5-ը մայիսի 2026թ., Երևան

Մենք՝ Հայաստանի Հանրապետության (Հայաստան) և Եվրոպական Միության (ԵՄ) առաջնորդներս, անցկացրել ենք Հայաստան-Եվրոպական Միություն առաջին գագաթնաժողովը Երևանում 2026թ. մայիսի 5-ին և համաձայնվել ենք հետևյալի շուրջ։

1. Այսօրվա գագաթնաժողովը Հայաստան-ԵՄ հարաբերությունների խորացման պատմական հանգրվան է: Այն արտացոլում է վերջին տարիների նշանակալի ձեռքբերումները և մեր քաղաքացիներին և ձեռնարկություններին շոշափելի արդյունքներ բերող մեր գործընկերության ռազմավարական կարևորությունը: ԵՄ-ն վերահաստատում է իր անսասան հանձնառությունը՝ առավել ամրապնդելու Հայաստանի հետ հարաբերությունները և սատարելու Հայաստանի ինքնիշխանությունը, դիմակայունությունը և բարեփոխումների համապարփակ օրակարգը՝ հիմնվելով ժողովրդավարության, մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և օրենքի գերակայության վրա, ինչպես նաև երկարաժամկետ զարգացումը՝ մոտ բերելով Հայաստանը և հայ ժողովրդին Եվրոպական Միությանը: ԵՄ-ն նաև խրախուսում է Հայաստանի պատրաստակամությունը՝ ավելի ինտենսիվ դարձնելու երկկողմ գործընկերությունը՝ ոլորտային ինտեգրման և ԵՄ օրենսդրությանը մոտարկման միջոցով:
2. ԵՄ-ն ճանաչում է հայ ժողովրդի եվրոպական ձգտումները, որոնք արմատավորվել են 2025թ. մարտին «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի» մասին օրենքի ընդունմամբ, որն արտահայտում է երկրի մտադրությունը՝ շարժվելու դեպի ԵՄ:
3. Մենք վերահաստատում ենք, որ Հայաստանի ապագան պետք է որոշվի ազատ և ժողովրդավարական ճանապարհով՝ իր քաղաքացիների կողմից:
4. Մենք ընդունում ենք Հայաստանի հանձնառությունը՝ կառուցելու խոր և կայուն ժողովրդավարություն, ինչպես նշված է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում և Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգում: Այս փաստաթղթերը մեր համագործակցությունն առաջիկա տարիներին ուղղորդող հավակնոտ քաղաքական շրջանակ են սահմանում: Այս համատեքստում էական է ընդգծել քաղաքացիական հասարակության դերը՝ երկկողմ հանձնառությունների կատարումը մշտադիտարկելու հարցում:
5. Մենք ողջունում ենք Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը, որը հաջողությամբ անցկացվել է Երևանում 2026թ. մայիսի 4-ին:

6. Հայաստանը և ԵՄ-ն կապակցված են քաղաքական ընդհանուր արժեքներով և միջազգային իրավունքի, ՄԱԿ-ի կանոնադրության և կանոնների վրա հիմնված միջազգային կարգի նկատմամբ ունեցած հանձնառությամբ: Մենք վերահաստատում ենք ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հիմնարար սկզբունքները: Մեր երկկողմ հարաբերությունների խորացումը ներդրում է խաղաղությանը, կայունությանը և բարգավաճմանը Հարավային Կովկասում և դրանից անդին:
7. Այս առումով մենք բարձր ենք գնահատում Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հետագա ինստիտուցիոնալացմանը և խաղաղության համաձայնագրի ստորագրման և վավերացման երաշխավորմանն ուղղված ջանքերը: Մենք բարձր ենք գնահատում նաև 2025թ. օգոստոսի 8-ի Վաշինգտոնի գագաթնաժողովի արդյունքները և վերջինին հաջորդող, Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերը: Ի հավելումն՝ ԵՄ-ն նաև լիարժեքորեն սատարում է Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորումը և տարածաշրջանային բոլոր հաղորդակցությունների ներառական վերաբացումը՝ հիմնված տարածաշրջանի երկրների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, ինչպես նաև սահմանների անքակտելիության և փոխադարձության սկզբունքների վրա: Մենք բարձր ենք գնահատում Հայաստանում ԵՄ առաքելության ներդրումը՝ Հարավային Կովկասում խաղաղության և կայունության խթանման հարցում:
8. Ուկրաինայի առնչությամբ կողմերը մտահոգություն են հայտնել ընթացող պատերազմի վերաբերյալ, որը շարունակում է պատճառել մարդկային անսահման տառապանքներ և ունենալ գլոբալ հետևանքներ: Մենք աջակցում ենք Ուկրաինայում համապարփակ, արդար և երկարատև խաղաղության հասնելու բոլոր ջանքերը՝ հիմնված ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքների վրա: ԵՄ-ն կրկնել է իր սկզբունքային դիրքորոշումը Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ագրեսիայի պատերազմի վերաբերյալ և վերահաստատել է իր աջակցությունը Ուկրաինայի անկախությանը, ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում:
9. Մենք քննարկել ենք Միջին Արևելքում վերջին զարգացումները և դրանց շղթայական ազդեցությունն ամբողջ աշխարհում: Մենք վերահաստատել ենք լարվածության թուլացման և զսպվածության, քաղաքացիական բնակչության և քաղաքացիական ենթակառուցվածքների պաշտպանության և բոլորի կողմից միջազգային իրավունքը լիակատար հարգելու մեր կոչը: Միայն երկխոսությունը և դիվանագիտությունը կարող են հանգեցնել լարվածության թուլացմանը և Միջին Արևելքում հետ բերել խաղաղությունը և կայունությունը՝ ՄԱԿ կանոնադրության և միջազգային իրավունքի լիակատար հարգմամբ:

10. 270 միլիոն եվրոյին համարժեք «Դիմակայունություն և աճ ծրագիր»-ը շարունակում է առաջ մղել Հայաստանի սոցիալ-տնտեսական բարեփոխումների օրակարգը, ամրապնդել ոլորտային համագործակցությունը և խթանել ներդրումները՝ էներգետիկայի, տրանսպորտի և մասնավոր ոլորտներում: Երկրի բարեփոխումների օրակարգի և ԵՄ-ին առավել մոտարկմանը հետագա աջակցություն ցուցաբերելու նպատակով կարող են դիտարկվել 2027թ. անդին ֆինանսական աջակցության հնարավոր հեռանկարներ:
11. «Գլոբալ դարպասներ» ռազմավարության ներքո նախատեսվում է, որ Հայաստանում ԵՄ ներդրումները կհասնեն 2,5 միլիարդ եվրոյի: Հայաստանը և ԵՄ-ն հանձնառու են խթանելու ներառական աճը և ընդլայնված կապակցվածությունը՝ հիմնվելով փոխշահավետ համագործակցության վրա:
12. Մենք ողջունում ենք Հայաստան-ԵՄ Կապակցվածության գործընկերությունը և ընդգծում դրա երեք ճյուղերի՝ տրանսպորտի, էներգետիկայի և թվային ոլորտների ռազմավարական կարևորությունը, ինչպես նաև մարդկանց միջև շփումներին միտված նախաձեռնությունները, որոնք ամրապնդում են փոխըմբռնումը, հասարակությունների դիմակայունությունը և կապերը գաղափարների, տաղանդների և ներդրումների եվրոպական ցանցերի հետ՝ Հայաստան-ԵՄ գործընկերության օրակարգի հետագա զարգացման նպատակով: Այս համատեքստում և ԵՄ միջտարածաշրջանային կապակցվածության օրակարգի շրջանակներում ԵՄ-ն ողջունում է Հայաստանի նախաձեռնությունները՝ միտված տարածաշրջանային ներառական կապակցվածության բարելավմանը՝ հիմնված ինքնիշխանության, իրավազորության, հավասարության և փոխադարձության սկզբունքների վրա, և վերահաստատում է իր աջակցությունը «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը: Այս համատեղ տեսլականը նպաստում է Սև ծովում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում խաղաղության, կայունության և կապակցվածության խթանմանը միաժամանակ ամրապնդելով մարդկանց միջև կապերը: Այս առումով, «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (ԹՐԻՓՓ) ծրագրի իրականացման հարցում առաջընթացն ընկալվում է որպես առանցքային, ինչը նպաստում է կայուն, անվտանգ և տարածաշրջանային ներառական կապակցվածությանը:
13. ԵՄ/Եվրոպական տնտեսական տարածքի ընկերություններին Հայաստանում ներդրումներ կատարելու հրավիրող հետաքրքրության ներկայացման կոչը լրացնում է Կապակցվածության գործընկերությունը՝ մոբիլիզացնելով մասնավոր հատվածի ներդրումներ և ստեղծելով փոխշահավետ հնարավորություններ, այդ թվում՝ ընդլայնված շուկայական հասանելիություն՝ ԵՄ/Եվրոպական տնտեսական տարածքի ընկերությունների համար, և աջակցելով Հայաստանում կայուն և դիմակայուն տնտեսական աճին:

14. ՀՀ-ԵՄ կապակցվածության բարձր մակարդակի երկխոսությունը տրանսպորտի, էներգետիկայի և թվային ոլորտներում համակարգված փոխգործակցության հարթակ կտրամադրի՝ ամրապնդելով ռազմավարական ներգրավվածությունը:
15. Մենք ողջունում ենք ՀՀ-ԵՄ բարձր մակարդակի տրանսպորտի երկխոսության մեկնարկը, որը վերահաստատում է տրանսպորտի ոլորտում համագործակցության ամրապնդման ռազմավարական կարևորությունը՝ Հայաստանի և ԵՄ միջև ապահով, արդյունավետ և կայուն տրանսպորտային կապերի ընդլայնման համար: Մենք գիտակցում ենք նաև, թե ինչպես կարող է Անդրեվրոպական տրանսպորտային ընդլայնված ցանցն աջակցել Հայաստանի ավելի սերտ կապակցվածությանը եվրոպական շուկաների հետ և խթանել տարածաշրջանային ավելի ինտեգրված և բազմազան տրանսպորտային կապեր:
16. ԵՄ-ն ողջունում է Հայաստանի ջանքերը՝ ուղղված էներգետիկ անվտանգության, դիվերսիֆիկացիայի, կայունության և դիմակայունության բարձրացմանը: Մենք գիտակցում ենք տարածաշրջանային էներգետիկ կապակցվածության՝ որպես աճի, դիմակայունության, կայունության և էներգետիկ անվտանգության շարժիչի ռազմավարական արժեքը և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային ուղենշային նախաձեռնությունների ներուժը, ինչպիսիք են՝ Հայաստանը Սևծովյան ստորջրյա մալուխում ընդգրկելու հեռանկարները:
17. ՄԱԿ Կլիմայի փոփոխությունների 28-րդ համաժողովին ընդունված «Առաջին գլոբալ ուսումնասիրության» համաձայն՝ մենք վերահաստատում ենք մեր վճռականությունը՝ հետևելու պահպանել Փարիզի համաձայնագիրը: ԵՄ-ն խրախուսում է շարունակական բարեփոխումները՝ համաձայն ԵՄ՝ էներգետիկայի և կլիմայի քաղաքականություններին՝ առաջ մղելով կենսաբազմազանության կորստի, աղտոտվածության և կլիմայական փոփոխության համաշխարհային եռակի ճգնաժամի դեմ պայքարը: ԵՄ-ն վերահաստատում է իր պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանի էներգետիկ անցմանը և ինտեգրմանը եվրոպական էներգետիկ շուկաներին: ԵՄ-ն ողջունում է Հայաստանի մտադրությունը՝ միանալու «Էներգետիկ անցման համաշխարհային ֆորումին» և «Էլեկտրաֆիկացման համաշխարհային արշավին», որն ի ցույց է դնում Հայաստանի հանձնառությունը՝ առաջ մղելու էներգետիկ անցումը: ԵՄ-ն, ի թիվս այլնի, ընդունում է Հայաստանի էլեկտրական ցանցի ամրապնդման, կուտակիչ կարողությունների ընդլայնման և տարածաշրջանային ինտեգրման առաջմղման անհրաժեշտությունը:
18. Մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը՝ միջուկային անվտանգության ուղղությամբ ընթացիկ համագործակցության հարցում: Հայաստանը ողջունում է Հայկական ատոմային էլեկտրակայանի՝ շահագործումից դուրսբերման ճանապարհային

քարտեզի մշակման հարցում ԵՄ աջակցությունը՝ համաձայն Հայաստանի՝ մինչև 2040թ. էներգետիկ ռազմավարության և ՀԸԳՀ-ով սահմանված համատեղ նպատակների:

19. Մենք համատեղ աշխատանքներ կտանենք՝ առավելագույնի հասցնելու թվային ոլորտում համագործակցության չիրացված զգալի ներուժի օգտագործումը: Մենք կուսումնասիրենք վստահության ծառայությունների համապատասխան շրջանակների տեխնիկական համատեղելիությունը՝ նպատակ ունենալով առաջ շարժվել էլեկտրոնային ստորագրությունների փոխադարձ ճանաչման ուղղությամբ՝ ընդլայնելու թվային ոլորտում համագործակցությունը և միջսահմանային գործարքները:

20. ԵՄ-ն ողջունում է «Չիպերի համատեղ նախաձեռնության»-ը (Chips Joint Undertaking) միանալու՝ Հայաստանի մտադրությունը, որը կնպաստի ավելի լայն համագործակցության հետազոտությունների և տեխնոլոգիական զարգացման և հմուտ աշխատուժի փոխանակման հարցերում, կընդլայնի տեխնոլոգիական նորարարությունը և կնպաստի ԵՄ-ի առաջատարությանը կիսահաղորդչային տեխնոլոգիաների ոլորտում:

21. Մենք կդիտարկենք արհեստական բանականության (ԱԲ) ոլորտում համագործակցության հնարավորությունները՝ համաձայն ԵՄ Արհեստական բանականության ակտին: Այս համագործակցությունը կաջակցի Հայաստանի ինտեգրմանը ԵՄ թվային միասնական շուկային՝ երաշխավորելով ԱԲ տեխնոլոգիաների էթիկական և թափանցիկ զարգացումը:

22. ԵՄ-ն ողջունում է «Բարձր արտադրողականությամբ հաշվարկման եվրոպական նախաձեռնության»-ը (European High Performance Computing Joint Undertaking) միանալու՝ Հայաստանի հետաքրքրվածությունը, որը կխթանի գիտական համագործակցության ընդլայնումը, տեխնոլոգիական նորարարությունը և կնպաստի համակարգչային առաջատար տեխնոլոգիաների հարցում ԵՄ առաջատար դերին:

23. Մենք ողջունում ենք 2024թ. մեկնարկած Մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության շրջանակում արձանագրված նշանակալի առաջընթացը, որը կընդլայնի շարժունակությունը, կխթանի մարդկանց միջև շփումները և կամրապնդի տնտեսական կապերը Եվրոպական Միության և Հայաստանի միջև: Մենք ընդգծում ենք Մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագրի և վերջինի հենանիշների արդյունավետ իրականացումը, և ողջունում ենք ԵՄ-Հայաստան մուտքի արտոնագրերի դյուրացման և հետընդունման համաձայնագրերի արդյունավետ իրականացումը:

24. Մենք աջակցում ենք Հայաստանի և Եվրապոլի, Եվրաջասթի, Ֆրոնտեքսի և ԵՄ այլ գործակալությունների հետ, ինչպես նաև Քրեական սպառնալիքների դեմ եվրոպական բազմաոլորտ հարթակի շրջանակում համագործակցության ամրապնդումը և հանձնառու ենք առավել ընդլայնելու մեր համագործակցությունը՝ իրավապահ, սահմանների

կառավարման, միգրացիայի կառավարման, այդ թվում՝ անկանոն միգրացիայի դեմ, և արդարադատության ոլորտներում:

25. Մենք ողջունում ենք Հայաստանի և Ֆրոնտեքսի միջև աշխատանքային պայմանավորվածության բանակցությունների հարցում գրանցված զգալի առաջընթացը՝ երկու բանակցողների կողմից նոր տեքստի նախաստորագրմամբ:

Մենք բարձր ենք գնահատում Հայաստանի գլխավոր դատախազության և Եվրոպական դատախազության միջև համագործակցության վերաբերյալ աշխատանքային պայմանավորվածության շուրջ բանակցությունների ավարտը:

26. Մենք օգտագործելու ենք ընդհանուր մարտահրավերներին ավելի լավ արձագանքելու և Հայաստանի դիմակայունությունը ամրապնդելու հարցում համագործակցությունն ինտենսիվացնելու առկա ներուժը: Այդ նպատակով՝ ԵՄ-ն և Հայաստանը հանձնառություն են վերցնում առավել զարգացնելու, խորացնելու և ամրապնդելու համագործակցությունը և երկխոսությունն անվտանգային և պաշտպանական մի շարք հարցերում՝ օգտվելով առկա շրջանակներից և ուսումնասիրելով համագործակցության նոր ուղիներ, ինչպես նաև հաշվի առնելով, որ անվտանգությունն ընդգրկում է միմյանց սերտորեն կապված ուղղությունների ավելի լայն շրջանակ:

27. Մենք բարձր ենք գնահատում ԵՄ և Հայաստանի միջև աճող համագործակցությունը Հայաստանի ժողովրդավարական դիմակայունությունն ամրապնդելու ուղղությամբ, այդ թվում՝ հիբրիդային սպառնալիքների և արտաքին տեղեկատվական մանիպուլյացիաների և միջամտության, ինչպես նաև ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ վստահությունը խաթարելու փորձերի դեմ պայքարի հարցում: ԵՄ հիբրիդային արագ արձագանքման թիմի տեղակայումը կարևոր ներդրում է ունեցել այս ուղղությամբ երկկողմ համագործակցության հարցում:

28. Հայաստանում ԵՄ գործընկերության առաքելության հիմնումը է՛լ ավելի կամրապնդի Հայաստանի ժողովրդավարական դիմակայունությունը և ճգնաժամերը կառավարելու կարողությունը՝ տրամադրելով խորհրդատվություն և աջակցություն Հայաստանի համապատասխան հաստատություններին:

29. Մենք ողջունում ենք Եվրոպական խաղաղության գործիքի ներքո Հայաստանին 30 միլիոն եվրոյի հասնող երկու անգամ տրամադրված ոչ մահաբեր աջակցությունը, որը միտված է ամրապնդելու Հայաստանի դիմակայունությունը և խթանելու զինված ուժերի փոխգործելիությունը՝ ապագայում, միջազգային առաքելություններին և գործողություններին, այդ թվում՝ ԵՄ կողմից իրականացվող, հնարավոր մասնակցության համար:

30. ԵՄ-ն ողջունում է Հայաստանի հետաքրքրվածությունը՝ ամրապնդելու համագործակցությունն Անվտանգության և պաշտպանության եվրոպական քոլեջի հետ՝

նպատակ ունենալով Հայաստանի համապատասխան ռազմական և քաղաքացիական կրթական հաստատությունները դարձնել Քոլեջի ասոցացված ցանցի գործընկերներ:

31. Անվտանգային և պաշտպանական համագործակցության շրջանակներում մենք կխթանենք կիբեր անվտանգության և դիմակայունության վերաբերյալ մտքերի փոխանակումը, բազմակողմանի քննարկումները, կիբեր միջադեպերին և հարձակումներին պատրաստվածությունը և արձագանքը՝ ամրապնդելով կիբեր անվտանգությունը և ուժեղացնելով կիբեր պաշտպանությունը:

32. Մենք ողջունում ենք խորհրդապահական տեղեկատվության փոխանակման վերաբերյալ «Տեղեկատվության անվտանգության մասին» համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկը և հանձնառու ենք վերջինի շուրջ բանակցություններն ավարտել հնարավորինս սեղմ ժամկետներում:

33. Մենք ողջունում ենք ԵՄ ճգնաժամային կառավարման գործողություններին Հայաստանի մասնակցության շրջանակը սահմանող համաձայնագրի ուժի մեջ մտնելը: Այս համատեքստում, գնահատում ենք Հայաստանի հետաքրքրվածությունը՝ մասնակցելու ԵՄ առաքելություններին և գործողություններին: Մենք ողջունում ենք նաև Հայաստանի աճող համապատասխանեցումը ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականությանը:

34. Մենք ողջունում ենք բնական և մարդածին աղետների շուրջ համագործակցության զարգացումն ու ամրապնդումը՝ քաղաքացիական պաշտպանության ոլորտում համագործակցության վերաբերյալ վարչական համաձայնագրի ստորագրմամբ, որը կնպաստի տեղեկատվության, փորձի և փորձագետների առավել արդյունավետ փոխանակմանը:

35. Մենք հանձնառու ենք շարունակելու մեր սերտ համագործակցությունը ԵՄ պատժամիջոցների շրջանցումը կանխելու և խափանելու գործում: Մենք կամրապնդենք համատեղ ջանքերը՝ երկակի նշանակության ապրանքների և մարտական գործողությունների ընթացքում կիրառվող զգայուն պարագաների առևտուրը և վերաարտահանումը մշտադիտարկելու, սահմանափակելու և դրանց նկատմամբ վերահսկողություն ապահովելու ուղղությամբ:

36. Մենք ողջունում ենք Հայաստանի և ԵՄ միջև ֆինանսական և տնտեսական ինտեգրման առաջընթացը, այդ թվում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան ապահով, թափանցիկ և արդյունավետ վճարումների և ֆինանսական համագործակցության խթանմանն ուղղված հնարավոր քայլերը:

37. ԵՄ-ն շարունակում է լինել Հայաստանի առաջնային առևտրային գործընկերը և ներդրողը՝ աջակցելով կայուն աճին, աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական դիվերսիֆիկացմանը. այս գործընկերության ամրապնդման հարցում կենտրոնական դերակատարում ունի Համապարփակ և ընդլայնված գործընկերության

համաձայնագիրը: Մենք վերահաստատում ենք համատեղ աշխատելու մեր հանձնառությունը՝ ավելացնելու և դյուրացնելու Հայաստանի արտահանումների կառուցվածքի դիվերսիֆիկացիան, այդ թվում՝ ԵՄ շուկա նոր ապրանքների արտահանումը:

38. ԵՄ-ն ի գիտություն է ընդունում համապատասխանության գնահատման ընթացակարգերին մոտարկվելու՝ Հայաստանի ձգտումը:
39. Մենք ողջունում ենք Հայաստանի մտավոր սեփականության գրասենյակի և ԵՄ մտավոր սեփականության գրասենյակի միջև Մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, որն արտացոլում է նորարարությունը պաշտպանելու և խթանելու, Հայաստանում մտավոր սեփականության իրավական հուսալի շրջանակի ամրապնդման համատեղ հանձնառությունը:
40. ԵՄ-ն ողջունում է Հայաստանի հետաքրքրվածությունը՝ միանալու ԵՄ «Customs» և «Fiscalis» ծրագրերին՝ ընդլայնելու մաքսային և ֆիսկալ հարցերում համագործակցությունը՝ մոտարկվելով ԵՄ պրակտիկային և օրենսդրությանը:
41. Մենք վերահաստատում ենք մեր ամուր հանձնառությունը՝ առաջ մղելու բարեփոխումները դիմակայուն և ներառական հասարակություն կառուցելու համար էական այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սոցիալական քաղաքականությունը, կրթությունը, հետազոտությունները և նորարարությունը, երիտասարդությունը, սպորտը, մշակույթը և առողջապահությունը, որպես օրինակ՝ «Էրազմուս+»-ի միջազգային ուղղության, ինչպես նաև «Հորիզոն Եվրոպա»-ի և «Ստեղծագործ Եվրոպա»-ի միջոցով: ԵՄ-ն կաջակցի Հայաստանի մտադրությանը՝ մասնակցելու «Ստեղծագործ Եվրոպա»-ի մեդիա բաղադրիչին, ինչը կնպաստի տեսալսողական ոլորտի զարգացմանը և կընդլայնի ԵՄ հետ մշակութային փոխանակումները: Մենք ողջունում ենք հայ երիտասարդության աճող մասնակցությունը ԵՄ ծրագրերին և միջոցառումներին, այդ թվում՝ «ԵՄ-ն հանուն երիտասարդության» ծրագրին, և ակնկալում նրանց շարունակական ներգրավվածությունը:
42. Մենք ողջունում ենք Հայաստանի միացումը Հետազոտությունների և նորարարության ոլորտում միջազգային համագործակցության սկզբունքների և արժեքների վերաբերյալ բրյուսելյան հայտարարությանը:
43. ԵՄ-ն ողջունում է Հայաստանի հետաքրքրվածությունը՝ «ԵՄ-ն հանուն առողջության» ծրագրի (2021–2027) առնչությամբ:
44. Մենք պատրաստակամ ենք ուսումնասիրել Հայաստան-ԵՄ գործընկերությունն ի նպաստ մեր ժողովուրդների և ձեռնարկությունների առաջ մղելու հետագա քայլերը: